ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Ապրիլի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սլովակիայի Հանրապետության Խորհրդարանի Քրիստոնեա-դեմոկրատական խմբակցության առաջնորդ Պավել Ռուշեւսկուն:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը վերահիշեց 2008 թ. նոյեմբերին Սլովակիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման փաստը, ինչում, իբրեւ Սլովակիայի Խորհրդարանի խոսնակ, մեծ դերակատարություն ունեցավ պրն Ռուշեւսկին: «Երբ քաղաքական առաջնորդների մեջ առկա է ասպվածասեր հոգին, նրանց որոշումները, վստահաբար, ունեն Սուրբ Հոգու առաջնորդությունը, եւ նման դեպքերում մարդկությունը ստիպված չի լինում ճաշակելու իր դեմ ուղղված հանցանքներ ու ոճիրներ: Մարդկության դեմ ոճիրները կարելի է կանխել նաեւ դրանց դատապարտումով», - նշեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով Սլովակիայի իշխանություններին:

Անդրադարձ կատարվեց նաեւ երկու երկրների միջեւ բարի հարաբերությունների ձեւավորման եւ զարգացման գործընթացին, ինչին մեծապես նպաստում են փոխայցելությունները:

Երախտագիտություն հայտնելով հյուրընկալության համար՝ պրն. Ռուշեւսկին նշեց, որ իր համար մեծ պատիվ է լինել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ հոգեւոր առումով նոր լիցքեր ստանալ՝ շփվելով Նորին Սրբության հետ: Իր խոսքում Պավել Ռուշեւսկին ընդգծեց, որ մարդկությունը կարող է խուսափել իր առջեւ ծառացած բազում մարտահրավերներից, եթե ուշադրության կենտրոնում պահի հոգեւոր եւ բարոյական արժեքները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր Աթոռի Վանորեից տեսուչ Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Պռոշյանը եւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: